նում է նաւահանգստում։ Թագաւոր կայսրը գիշերը անցկացրեց վագօն-սալօնում։

ՄԻՒՆԽԸՆ, 6 հոկտեմբերի։ Թագաժառանգ Ցեսարեվիչը ուղևորվեց Բրինդիզի։

ԱԹԷՆՔ, 6 հոկտեմբերի։ Կրիտէ կղզուց ստացված են կարևոր լուրեր. կանէյի մօտ գտնվող գունդը ապստամբվեց և հրաժարվեց չինել ճանապարհները, յայտնելով որ զինուորները բանուորներ չեն. դրանց օրինակին հետևել են կղզու խորքերում զետեղված երեք ուրիշ գնդեր։ Շաքիր փաշան գնաց բանակը, բայց ստիպված եղաւ փախչել. նա հազիւ կարողացաւ ազատվել և ոչինչ միջոցներ չը կարողացաւ ձեռք առնել. չեն վստահանում օգնութիւն կանչել միւս գնդերին, վախենալով, որ նրանք էլ կը միանան ապստամբների հետ։ Շաքիր փաշայի դրութիւնը ծանր է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի։ Թագաւոր կայսրը և Թագուհի կայսրուհին, Մեծ իշխան Գեօրգիյ և Միխայիլ Ալէքսանդրովիչները, Մեծ իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրօվնա և Օլգա Ալէքսանդրօվնա՝ երէկ երեկոյեա ն10 ժամին հասան վ. Երժբոլօվօ Ակադէմիայի փոխ-նախագահ Բունիակօվսկի, իր խնդրքի համեմատ, արձակված է պաշտօնից, նշանակվելով ակադէմիայի պատուաւոր նախագահ, իսկ նրա փոխարէն նշանակված է օրդինար ակադէմիկ Գրոտ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Խորէն Դաւթեան և Միրիման Դաւթեան ՄԻՐԻՄԱՆԵԱՆՆԵՐԸ սրտի ցաւով յայտնելով իրանց հօր ԴԱՒԻԹ ՅԱԿՈԲԵԱՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ լինել հագուցեալի յուղարկաւորութեանը, որը տեղի կունենայ սեփական տնից, Ելիզավետինսկայա և Մաստօվայա փողոցների անկիւնում, դէպի կուկիայի ս. Աստուածածին եկեղեցին, շաբաթ օր, հոկտեմբերի 7-ին, առաւօտեան 10 ժամին։ 1—1

## BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

### ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Չորեքշաբթի, հոկտեմբերի 11-ին, ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRELIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլօղլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 114. (Շ.) 2—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է

## ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Ձեռագործութեան և մասամբ էլ գծագրութեան համար։ Ցանկացողները ՇՈՒՏՈՎ պէտքէ դիմեն «Մշակի» խմբագրատունը, պայմանները իմանալու համար։ 1—2

## COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

### PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

### (ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 13/25 Հոկտեմբերի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ TIGRE (ՏԻԳՐ) նաւապետ NIEL (ՆԻԷԼ), մտնելով Կ. Պօլիս, Պօրտ-Լահօս և Լակավայ։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՁՈՒԲԵԱՆ ՀԵՁՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍՏ։ 1—2

## ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

Առակ չափահասների համար

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ։

վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում։

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ. 10—10

## ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, ռէվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնտրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ։ Տուն Պոպօվի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսավէտինսկայա № 2, ինտենդանտութեան մօտ, Վօրօնցօվեան կահաւորված սենեակների դիմաց։

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ. 9—14

## ՍՊԻՏԱԿԵՂԷՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻՐԻՐԷՆԵԱՆԻ

Պատրաստում եմ զանազան տեսակի բրթեա կամ խաւով երեսսրբիչներ և բաղնիսի համար ամեն տեսակի շորեր. շապիկ, փաթաթվելիք՝ մի-երեսանի, կամ երկու-երեսանի։ Ընդունում եմ նաև պատուէրներ ձեռնտու գներով։ Գործարանս գտնվում է Հաւլաբարում, Հացի մագազինի դիմաց, տուն Միրզաեվի № 20։ Իսկ իմ պատրաստած իրեղէնները կարելի է գտնել Սիօնի փողոցում, Արծրունի քարվանսարայում։

4—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## „ԱՍՏՂ ԲԵԹՂԷՀԵՄԻ“

Սկզբունք ճշմարտութեան

ԳՐԵԱԼ Ի ՄԱՆՈՒԿԷ ԳՕՋՈՒՆԵԱՆԷ, Կ. ՊՕԼԻՍ

Գինն է 5 ղուրուշ 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## „ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ“

Գրեց Ն. Տէր-Աւէտիքեան

Գինն է 30 կոպէկ։

Ծախվում է „Աղբիւրի“ խմբագրատանը։

5—5

Վ. ՇԷՔՍՊԻՐ

## „ՋՈՒՐ ՏԵՂԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ“

կօմէդիա 5 արարուածով

Թարգ. Ց. Լալայեանցի

Գինն է 50 կոպէկ։

վաճառվում է կենտրօնական գրավաճառանոցում և իշխ. Բէհբութեանի գործակալական պավիլիօնում։ 9—10

Մի գերդաստան

## ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ։

Դիմել հետևեալ հասցէով. Սօլօլակ՝ Գանօվսկի փողոց, տուն Շաղինեանցի № 25. 2—10

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՌՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_4$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամացաւի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—$5^1/_2$—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—$5^1/_2$—$6^1/_2$ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցումն են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արաազեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՌՈՒԴԿՕՎՍԿԻ

Լոյս տեսաւ

„Գրքերի հրատարակութեան ընկերութեան“ հրատարակութեամբ

## „ՍՈԿՐԱՏԷՍ“

Թարգմանեց օր. Թէկղի Ստեփոյեան

Գինն է 10 կոպէկ։

4—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԻ

## „ՄԱՆԻԿ“

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԷՊ

Գինն է 40 կոպէկ

3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐՔԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

400-ի չափ տեղական և եւրօպական՝ աժան, համեղ և անմնաս կերակուրներ պատրաստելու եղանակ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւենիք. Թթուեղէն. պտուղների, բանջարեղէնի և կանաչեղէնի պահպանելը և չորացնելը. կաթնատնտեսութիւն և զանազան գիտելիք։

կազմեց Ց. ՄԷԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՑ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Վաճառվում է բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Մարտիրոսեանի տպարանում։ Վերջինիս մօտ 10-ից աւելի գնողին՝ 10 տոկոս զիջումն կը լինի։ 6—8

Дозволено цензурою, Тифлисъ 6 Октября 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.